



ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ (2021 ԹՎԱԿԱՆ)





- ԱԺ-ի կողմից 09.04.2007թ. ընդունված «Փոստային կապի մասին» եւ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքներում փոփոխություններ կատարելու մասին №173-Ն եւ №174-Ն օրենքներով 2007 թվականից փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (վերանայման) գործառույթը վերապահվել է ՀԾԿՀ-ին:
- Նշված օրենքներով ՀԾԿՀ-ին փոստային կապի բնագավառում այլ գործառույթներ, այդ թվում՝ փոստային կապի ոչ ունիվերսալ ծառայությունների գների կարգավորման գործառույթ վերապահված չեն:





«Փոստային կապի մասին» օրենքի համաձայն՝ փոստային կապի ունիվերսալ ծառայությունները Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում փոստային կապի հետեւյալ ծառայություններն են՝


- ✓ *նամակագրական թղթակցության առաքումը,*
- ✓ *մինչեւ 20 կգ քաշով ծանրոցների առաքումը,*
- ✓ *գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքումը,*
- ✓ *«Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքով սահմանված փաստաթղթերի հատուկ առաքումը:*

ՀՀ ամբողջ տարածքում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման պարտավորությունը կրում է փոստային կապի ազգային օպերատորը՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն:






- Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման (վերանայման) գործառույթը ՀԾԿՀ-ին վերապահելուց հետո՝ մինչև 2020 թվականի նոյեմբերը «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից հայտ չի ներկայացվել, որի արդյունքում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների սակագները չեն վերանայվել եւ շարունակել են գործել ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարի կողմից 28.12.2001թ. հաստատված սակագները:
- Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների գործող սակագներն ուժի մեջ մտելուց (01.01.2002թ.) հետո անցել է շուրջ 19 տարի եւ այդ ընթացքում տեղի են ունեցել սակագների վրա ազդող գործոնների էական փոփոխություններ, որի արդյունքում էլ «Հայփոստ» ՓԲԸ-ն 20.11.2020թ. ՀԾԿՀ է ներկայացրել նշված սակագների վերանայման հայտ:





- «Հայփոստ» ՓԲԸ-ի հայտն ընդունվել է ուսումնասիրության 04.12.2020թ. եւ այնուհետեւ տեղադրվել ՀԾԿՅ կայքում՝ հնարավորություն ընձեռելով շահագրգիռ անձանց ծանոթանալու, ներկայացնելու իրենց հարցերը եւ ստանալու պարզաբանումներ:
- Հայտի ուսումնասիրության ընթացքում ՀԾԿՅ-ն «Հայփոստ» ՓԲԸ-ից 09.02.2021թ. պահանջել եւ 16.03.2021թ. ստացել է լրացուցիչ տեղեկատվություն ու հիմնավորումներ, որոնք նույնպես տեղադրվել են ՀԾԿՅ կայքում:
- Ներկայացված բոլոր փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ՀԾԿՅ աշխատակազմն իրականացրել է իր հաշվարկները եւ դրանցում ներառել միայն հիմնավորված ծախսերն ու սակագների ձեւավորմանը մասնակցող այլ ցուցանիշները, որոնք նույնպես տեղադրվել են ՀԾԿՅ կայքում:
- Սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների եւ «Հայփոստ» ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ 22.03.2021թ. ՀԾԿՅ-ում կազմակերպվել է քննարկում, որի ընթացքում հնչել են հարցեր եւ տրվել պարզաբանումներ:







- Ինչպես «Հայփոստ» ՓԲԸ-ի հայտով, այնպես էլ ՀԾԿՀ աշխատակազմի հաշվարկներով առաջարկվում է սահմանել (վերանայել) նամակագրական թղթակցության, մինչեւ 20 կգ քաշով ծանրոցների եւ գյուղական բնակավայրերում պաշտոնական պարբերականների առաքման ունիվերսալ ծառայությունների սակագները:
- Փաստաթղթերի հատուկ առաքման ծառայությունը «Հայփոստ» ՓԲԸ-ն երբեւէ չի մատուցել: Նշված ծառայության մատուցման նպատակով անհրաժեշտ են ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից համարակալված դրոշմանիշի նմուշի սահմանում, ծանուցագրի եւ անդորրագրի ձեւերի սահմանում, ծանուցագրի լրացման կարգի սահմանում: Դրանից հետո նոր միայն հնարավոր կլինի սահմանել փաստաթղթերի հատուկ առաքման ծառայության սակագին:






- «Հայփոստ» ՓԲԸ-ի ծախսերի կառուցվածքից ակնհայտ է, որ սակագների վրա ազդող հիմնական գործոնը աշխատավարձի գծով ծախսն է: Ըստ ՀԾԿՀ աշխատակազմի հաշվարկների՝ այն ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 61%:
- Ընդհանուր ծախսերում մեծ կշիռ ունեն նաեւ այլ ծախսերը, սակայն վերջինիս էական մասը միջազգային փոստային փոխադրման ծախսերն են, որոնք առջնություն չունեն փոստային կապի ունիվերսալ ծառայությունների հետ:
- Միայն փոստային կապի ունիվերսալ ծառայություններին վերաբերող ծախսերում աշխատավարձի գծով ծախսը, ըստ ՀԾԿՀ աշխատակազմի հաշվարկների, կազմում է 80,6%:







Սակագների հաշվարկման նպատակով «Հայփոստ» ՓԲԸ-ում առանձնացվել են 5 ծախսային կենտրոններ: Մասնավորապես, սակագնի կառուցվածքում էական կշիռ ունեցող աշխատավարձի գծով ծախսային կենտրոններն են՝

- ✓ *փոստային բաժանմունքների ցանցի աշխատողներ (օպերատորներ, ավագ օպերատորներ, ցանցը կառավարող անձնակազմ),*
- ✓ *փոստատարներ,*
- ✓ *փոստի փոխանակման կենտրոններ,*
- ✓ *փոստային փոխադրման անձնակազմ,*
- ✓ *վարչական աշխատողներ:*






- Փոստային բաժանմունքների ցանցի աշխատողների զգալի մասի (օպերատորներ, ավագ օպերատորներ) եւ փոստատարների (շուրջ 2260 աշխատողի կամ ընդհանուր աշխատողների շուրջ 70%-ի) միջին ամսական աշխատավարձը հավասար է կամ մոտ է օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձին:
- Արդյունքում, օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի ավելացումը հանգեցնում է «Հայփոստ» ՓԲԸ-ի աշխատավարձի գծով ծախսի ավելացմանը, որն էլ անհրաժեշտություն է առաջացնում բարձրացնել «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների սակագները:





«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների միջեւ ծախսերի բաշխման սկզբունքները





«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների միջեւ ծախսերի բաշխման սկզբունքները

ՓՈՒԼ 1. Ծախսերի վերլուծության արդյունքում առանձնացվել են՝

- Միայն ունիվերսալ ծառայություններին վերաբերող ծախսերը,
- Միայն ոչ ունիվերսալ ծառայություններին վերաբերող ծախսերը,
- «Հայփոստ» ՓԲԸ-ի գործունեությանը վերաբերող ընդհանուր ծախսերը, որոնք ունիվերսալ եւ ոչ ունիվերսալ ծառայությունների միջեւ կարող են բաշխվել միայն որոշակի սկզբունքների հիման վրա: Այսպես՝
 - ✓ Փոստատարների, փոստի փոխանակման կենտրոնի աշխատողների աշխատավարձի գծով ծախսը բաշխվել է ըստ վերջիններիս գործառույթների առնչվող ունիվերսալ եւ ոչ ունիվերսալ ծառայությունների քանակների մասնաբաժինների,
 - ✓ Փոստային փոխադրման անձնակազմի աշխատավարձի գծով եւ տրանսպորտային ծախսերը բաշխվել են ըստ փոխադրվող ունիվերսալ եւ ոչ ունիվերսալ առաքանիների քաշերի մասնաբաժինների,
 - ✓ Փոստային բաժանմունքների աշխատողների (օպերատորների), վարչական աշխատողների աշխատավարձի գծով, վարչական բնույթի այլ եւ մաշվածության գծով ծախսերը բաշխվել են ըստ ունիվերսալ եւ ոչ ունիվերսալ ծառայությունների հասույթների մասնաբաժինների,
 - ✓ Նորոգման եւ նյութական ծախսերը բաշխվել են ըստ ունիվերսալ եւ ոչ ունիվերսալ ծառայությունների քանակների մասնաբաժինների:

ՓՈՒԼ 2. Ունիվերսալ ծառայություններին ուղղակիորեն, անուղղակիորեն վերաբերող ծախսերը եւ ընդհանուր ծախսերի ունիվերսալին վերագրված մասնաբաժինը ունիվերսալ ծառայությունների տեսակների միջեւ բաշխվել են ըստ վերջիններից փաստացի հասույթների մասնաբաժնի ունիվերսալ ծառայությունների միջեւ:





«Հայփոստ» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթի հաշվարկը

մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի

№	Անվանում	ՀԾԿՀ առաջարկ (Ընդամենը)	Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ	Փոստային կապի ոչ ունիվերսալ ծառայություններ	Ընդհանուր ծախսեր		
					Փոստային կապի ունիվերսալ ծառայություններ	Փոստային կապի ոչ ունիվերսալ ծառայություններ	Ընդամենը
1	Շահագործման և պահպանման ծախսեր	8,180.51	44.63	2,118.20	2,047.68	3,970.01	6,017.69
1.1	Աշխատանքի վճարման ծախսեր	4,992.72	44.63	386.65	1,641.10	2,920.35	4,561.45
1.2	Գործուղման և ուսուցման ծախսեր	76.01	0.00	76.01	0.00	0.00	0.00
1.3	Մաշվածություն և ամորտիզացիա	533.47	0.00	0.00	126.84	406.63	533.47
1.4	Նորոգման ծախսեր	26.00	0.00	0.00	7.36	18.64	26.00
1.5	Նյութական ծախսեր	331.30	0.00	0.00	137.94	193.36	331.30
1.6	Այլ շահագործման ծախսեր	2,221.01	0.00	1,655.54	134.45	431.03	565.47
2	Շահույթ	76.68	0.45	21.24	13.07	41.92	54.99
	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՍՈՒՅԹ	8,257.19	45.07	2,139.44	2,060.76	4,011.93	6,072.68



«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ունիվերսալ ծառայությունների սակագների հաշվարկը

դրամական մեծությունները՝ առանց ԱԱՀ-ի

	Անվանում	Չափի միավոր	ՀԾԿԸ առաջարկ (Ընդամենը)	Փոստային կապի ունիվերսալ ծառայությունների տեսակները			
				Նամակագրական թղթակցության առաքման գծով ծառայություններ	Մինչև 20 կիլոգրամ քաշով ծանրոցների առաքման գծով ծառայություններ	Գյուղական բնակավայրերում պարբերականների առաքման գծով ծառայություններ	Փաստաթղթերի հատուկ առաքման գծով ծառայություններ
1	Շահագործման և պահպանման ծախսեր	մլն դրամ	2,092.31	1,800.50	278.49	13.32	0.00
1.1	Աշխատանքի վճարման ծախսեր	մլն դրամ	1,685.72	1,450.62	224.37	10.73	0.00
1.2	Գործուղման և ուսուցման ծախսեր	մլն դրամ	0.00	0.00	0.00	0.00	0.00
1.3	Մաշվածություն և ամորտիզացիա	մլն դրամ	126.84	109.15	16.88	0.81	0.00
1.4	Նորոգման ծախսեր	մլն դրամ	7.36	6.33	0.98	0.05	0.00
1.5	Նյութական ծախսեր	մլն դրամ	137.94	118.70	18.36	0.88	0.00
1.6	Այլ ծախսեր	մլն դրամ	134.45	115.69	17.89	0.86	0.00
2	Շահույթ	մլն դրամ	13.52	11.64	1.80	0.09	0.00
3	Անհրաժեշտ հասույթ	մլն դրամ	2,105.83	1,812.14	280.29	13.41	0.00
4	Մատուցվող ծառայության ծավալը	հատ	8,126,205.0	7,401,892.0	300,755.0	423,558.0	0.0
5	Մատուցվող ծառայության միջին սակագինը	դրամ		244.82	931.94	31.65	-





«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ունիվերսալ ծառայությունների առաջարկվող սակագները

սակագները՝ ներառյալ ԱԱՀ-ն

№	Ծառայություններ	Քանակ	Գործող		Հայփոստի առաջարկ		ՀՄԿՀ առաջարկ	
			սակագին	հասույթ	սակագին	հասույթ	սակագին	հասույթ
		հազ	դրամ	մլն դրամ	դրամ	մլն դրամ	դրամ	մլն դրամ
I	ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՔՈՒՄ	7,401,892	142.4	1,053.75	356.2	2,636.34	293.5	2,172.25
1	Նամակներ	7,337,144	140.5	1,030.96	355.3	2,606.58	291.9	2,141.95
1.1	Հասարակ	595,585	75.3	44.82	340.9	203.01	231.0	137.55
1.2	Պարվիրված	6,741,518	146.3	986.11	356.5	2,403.54	297.3	2,004.36
1.3	Գնահատված	41	632.2	0.03	816.1	0.03	758.3	0.03
2	Փաթեթներ	64,748	352.0	22.79	459.7	29.76	468.0	30.30
2.1	Հասարակ	2,287	513.7	1.17	611.0	1.40	624.4	1.43
2.2	Պարվիրված	62,436	345.8	21.59	453.9	28.34	462.0	28.84
2.3	Գնահատված	25	989.2	0.02	1,028.0	0.03	1,101.6	0.03
II	ՄԻՆՉԵՎ 20 ԿԳ ՔԱՇՈՎ ԾԱՆՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄ	300,755	1,319.0	396.68	1,021.5	307.21	1,121.5	337.29
	Հասարակ	300,735	1,318.9	396.63	1,021.4	307.18	1,121.4	337.25
	Գնահատված	20	2,611.0	0.05	1,852.0	0.037	1,952.0	0.04
III	ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄ	423,558	27.7	11.72	27.7	11.72	38.0	16.09
IV	«ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՔՈՒՄ		-	0.00	-	0.00	-	0.00
	ԸՆԴԱՄԵՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8,126,205	-	1,462.15	-	2,955.27	-	2,525.63





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ